

**ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ**

ՕՀԱՆՅԱՆ ՀԱՅԿ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

e-mail: ohanyan.gev@gmail.com

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի

«Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/» բաժնի

մագիստրատուրայի շրջանավարտ

e-mail: k.tadevosyan@mail.ru

Հոդվածը նվիրված է կրտսեր դպրոցականների շրջանում միջանձնային հաղորդակցության հիմնահարցին, որը լրացուցիչ խթան է նրանց ուսումնառության որակի հեղափոխության աճի համար:

Բանալի բառեր՝ կրտսեր դպրոցական, երեխա, ուսուցիչ, դաստիարակ, հաղորդակցական կարողություններ, մանկավարժական տեխնոլոգիա, անձի զարգացում, ուսումնառություն և այլն:

Դեռ դպրոց չհաճախած՝ երեխաները կարողանում են ինքնուրույն արտահայտել իրենց մտքերը, որոշ դատողություններ անել, կառավարել իրենց վարքը, որոնք հետագա զարգացման կարիք ունեն: Երեխաների ինքնուրույն դատողություններ կատարելու, դրանք ճիշտ ձևակերպելու, կապակցված խոսք կառուցելու և այլ կարողություններ ձևավորման փուլում են գտնվում՝ սկսած տարրական դասարաններից: Տարրական դպրոցը դպրոցականի ընդհանուր կրթական գործընթացում, թերևս, ամենակարևոր օղակն է: Ուսումնառության չորս տարիների ընթացքում աշակերտը պետք է յուրացնի ոչ միայն առարկայական ծրագրով նախատեսված թեմաները, այլև սովորի սովորեցնել նաև ուրիշներին: Սովորի սովորեցնել ինքն իրեն. սա է տարրական դպրոցի հիմնական առաքելությունը:

Մեր դպրոցն ապրում է կրթական գործընթացը արդիականացնելու հերթական փուլ, որի հիմքում ընկած են կյանքի որակը բարելավելու, լիարժեք քաղաքացի ձևավորելու գաղափարները: Տարրական դասարաններում սովորողների ուսումնառությունը պետք է կառուցված լինի նրանց

հետաքրքրությունների հենքի վրա, հակառակ դեպքում ցանկալի արդյունք դժվար է ակնկալել: Դպրոցը սովորողներին հաղորդում է բազմակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որպեսզի նրանք հետագայում կարողանան իրենց հնարավորությունների սահմաններում ինքնուրույն գործունեություն ծավալել և բարեկեցիկ կյանք վայելել: Ուսուցման բարենպաստ պայմանների պարագայում ձևավորվում և զարգանում են նաև երեխաների ինքնագիտակցության և ինքնագնահատման կարողությունները: Կրտսեր դպրոցականին բնորոշ է շրջապատի մարդկանց հասկանալը, իր վարքը կառավարելը, ընկերների հետ հաղորդակցվելը:

Ահա թե ինչու է կարևորվում նրանց խոսքի, հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրության հիմնահարցը:

Ժամանակակից հասարակությունը սրընթաց ընթանում է դեպի զարգացման նոր շրջափուլ, և առաջնային կարևորություն է ստանում ապագայի համար լիարժեք քաղաքացիներ կրթելու գաղափարը: Այն իրենից ենթադրում է մշակութային, անձնային, խմբային շփումների նոր, ավելի զարգացած մակարդակ, որի վերաբերյալ գիտելիքներ մարդը ստանում է դեռևս կրտսեր դպրոցական տարիներում:

Խնդրո առարկա հարցադրման ուսումնասիրության համար օգտակար է հոգեբան Յուլերմանի մշակած մեթոդիկան, որը թույլ է տալիս գնահատել աշակերտների հաղորդակցական ունակությունների մակարդակը:

Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում սոցիալական պայմանների ու գործունեության նոր ձևերի փոփոխության առումով: Հետևաբար երեխաներին հոգեբանորեն պետք է նախապատրաստել դպրոց հաճախելու համար:

Կրտսեր դպրոցական տարիքը (6- 10 տարեկան) անձի կայացման կարևորագույն փուլերից է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում նոր շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում ստանձնել նոր դերեր ու պարտականություններ: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական՝ անհրաժեշտության և ցանկության դրդապատճառները: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից՝ դրդված լինելով ցանկության պահանջմունքով, ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է նրան մանկության աշխարհ, որտեղ ամեն ինչ ծանոթ է, իրականանալի, և չկան որոշակի դժվարություններ: Երեխան անհանգիստ է, ունի անկայուն ուշադրություն, նրա մոտ ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է առաջնորդվել ուսումնառության նկատառումներով:

Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամաձինության ձևավորումը՝ պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում և այլն¹:

Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դեր է ստանձնում իր շրջապատում, նրան առաջադրվում են պարտականություններ՝ կապված ուսումնական գործունեության հետ: Հարազատները, ծնողները, ուսուցիչները և անգամ օտարները երեխայի հետ շփվում են ոչ միայն փոքրերի, այլև որպես դպրոցականի, որն իր վրա է վերցրել սովորելու պարտավորությունը (անկախ իր ցանկությունից):

Կրտսեր դպրոցական տարիքում առկա է սոցիալական հարաբերությունների երկու ձև՝ երեխա-մեծահասակներ և երեխա- երեխաներ: Երեխա-մեծահասակ համակարգը տարբերակվում է. երեխա- ուսուցիչ, երեխա-մեծահասակ, երեխա-ծնողներ և երեխա- երեխաներ²:

Այս տարիքում անձնավորության զարգացման ձեռքբերում է համարվում «Ես պարտավոր եմ» մոտիվի գերիշխումը «Ես ուզում եմ» մոտիվի նկատմամբ³:

Ուսումնական գործունեությունը պահանջում է երեխայից խոսքի, ուշադրության, հիշողություն, երևակայության և մտածողության զարգացման նոր ձեռքբերումներ, ստեղծվում է նոր պայմաններ նրա հետագա զարգացման համար: Երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է առաջնային գործունեության հիմնական ձևը, բայց դեռևս պահպանվում է խաղալու պահանջումները: Այդ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, որը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

Ուսուցիչը ուսումնական գործընթաց կազմակերպելիս պետք է օգտագործի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Դաստիարակը պետք է կազմակերպի նաև երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում նրանք լիցքաթափվում են և կարողանում արդյունավետ մասնակցել ուսումնառությանը:

Կրտսեր դպրոցականի համար չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում է նոր

¹ Բալյան Ա. Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, «Լույս», 1983, էջ 34:

² Обхуова Л. Ф., Возрастная психология, Москва, «Издательство Юрайт», 2011, стр. 338.

³ Кулагина И. Ю., Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет” / Ун-т Рос. акад. Образования, 5-е изд., М., Изд-во УРАО, 1999, Стр.247

գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու ձգտումը: Աշակերտի համար կարևորվում է ուսուցչի խրախուսանքը, գնահատականը, իսկ ավելի ուշ՝ նաև հասակակիցների կարծիքը իր նկատմամբ: Այս ամենը նպաստում է երեխայի «Ես»-ի ինքնահաստատմանը, աստիճանաբար հատկանշական են դառնում ընկալման, ուշադրության կենտրոնացման, մեխանիկական ու տրամաբանական հիշողության զարգացմանը: Ընկալումը բավականաչափ զարգացած է, որի պատճառով երեխան երբեմն շփոթում է իրար նման տառերը և թվերը /օրինակ՝ 6 և 9/: Եթե նախադպրոցական տարիքին բնորոշ է վերլուծող ընկալումը, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ համադրող ընկալումը:

Կրտսեր դպրոցականների հիշողությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ կամային և ոչ կամային: Երեխաները հիշում են այն ուսումնական թեմաները, որոնք իրենց համար հետաքրքիր են եղել և մատուցվել է խաղային ձևով, վառ տպավորություններով: Բայց, ի տարբերություն նախադպրոցականի, նրանք ունակ են կամայնորեն մտապահել նաև այն նյութերը, որոնք իրենց համար դեռևս հետաքրքիր չեն:

Առաջին ազդարարային համակարգի գերակշռության պատճառով կրտսեր դպրոցականի մեջ ավելի լավ զարգացած է գննական, պատկերային, քան, այսպես կոչված, բառատրամաբանական հիշողությունը: Այսինքն՝ երեխաներն ավելի լավ մտապահում են կոնկրետ դեպքերը, դեմքերը, իրադարձությունները, առարկաները, քան սահմանումները, բացատրությունները, կանոնները և այլն:

Այս տարիքում զարգանում է երեխայի ուշադրությունը: Դասի ընթացքում ուսուցիչը երեխայի ուշադրությունը բևեռում է ուսումնական նյութի վրա, նա աշխատանքի մի ձևից անցում է կատարում մյուսին: Դպրոցականի համար հատկապես արտաքին տպավորություններն ուժեղ, շեղող գործոններ են սկսում դառնալ: Ուսումնական գործունեության ընթացքում զարգանում է նաև կամային ուշադրությունը: Երեխան աստիճանաբար ձեռք է բերում առաջադրանքը ինքնուրույն կատարելու և հասկանալու ունակություն:

Կրտսեր դպրոցականների համար ուսուցիչն անառարկելի հեղինակություն է վայելում, որի հանձնարարությունների նկատմամբ նրանք մեծ ակնաձանքով են վերաբերվում: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում ուսուցչին արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար:

Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները¹:

¹ Բայլան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, «Լույս», 1983, էջ 35:

Հոգեբան Մ. Խոլլիդեյը, հետևելով իր տղայի խոսքի զարգացմանը, առաջ քաշեց խոսքային վարքի հետևյալ գործառույթները՝ **ինսպրումենտալ** /նյութական պահանջմունքների բավարարում/, **կարգավորող** /շրջապատի մարդկանց վարքի վերահսկում/, **փոխգործող** /կոնտակտի պահպանում/, **անձնական** /սեփական պահանջների ներկայացում/, **էվրիստիկ կամ որոնողական** /ինչու՞/, **երևակայական** /ներքին աշխարհ/, **ինֆորմատիվ** /տեղեկատվական/ և այլն: Ակնհայտ է խոսքային գործառույթների բազմակողմանիությունը: Կարևոր է այն, որ նրանք լայն կիրառվում են մանկավարժական հաղորդակցման ինտերպրիտացիաների ժամանակ, արտացոլելով կոմունիկատիվ փոխգործողության տարբեր կողմերը¹:

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքը անձնավորության ձևավորման կարևորագույն փուլերից է, որով պայմանավորված է նրա հոգեբանական որակների հետագա զարգացումը, երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնելով միջավայրում իր հաղորդակցման շրջանակը:

Հաղորդակցության դերը կրտսեր դպրոցականի կյանքում

Ժամանակակից մանկավարժությունը կարևորում է սովորողների ոչ այնքան գիտելիքների քանակական յուրացումը, որքան այն ինքնուրույնաբար ձեռք բերելու, գործելու ձգտումն ու կարողությունը: Գիտատեխնիկական հեղափոխության արդի փուլում աշակերտը հայտնվել է տեղեկատվական հաղորդակցության հորձանուտում, որին նա պետք է պատրաստ լինի: Այդ մասին է վկայակոչում նաև հանրակրթության պետական չափորոշիչը, որտեղ յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացված է կրթության բովանդակության բաղադրիչների միջոցով: Մասնավորապես կարևորվել է սովորողների հաղորդակցական կարողությունների ու հմտությունների հիմնահարցը:

Տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա.

1. հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը,
2. կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր,
3. սովորել և սովորեցնել, ցուցաբերել սովորելու հիմնական հմտությունները,

¹ Обухова Л. Ф., Возрастная психология, Москва, «Издательство Юрайт», 2011, стр. 263

4. կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող և այլն:

Հաղորդակցության գործառույթը ենթադրում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում: Հատուկ նշանակություն է ձեռք բերում սովորողի խոսքային հաղորդակցության մշակույթի ձեռքբերումը, զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը: Օրինակ՝ մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաները նպաստում են սովորողների հաղորդակցման ունակությունների գեղագիտական կողմի զարգացմանը:

Նշանավոր հոգեբան Դ. Էլկոնինը տարբերակել ու բնութագրել է դպրոցական համակարգված ուսուցման հիմնական առանձնահատկությունները: Նա ընդգծել է, որ ուսումնական գործունեության ընթացքում յուրացված գիտելիքները, հմտությունները և գործունեության եղանակները համարվում են յուրաքանչյուր աշակերտի անձնական ձեռքբերումը. «Դրա համար էլ միշտ ուսումնական գործունեությունը անհատապաշտական ուղղվածություն ունեցող գործողության վերածվելու վտանգ կա»¹:

Այսպիսով, ուսումնական գործունեության կառուցվածքի կարևորագույն բաղադրամասն են կազմում ուսումնաճանաչողական մոտիվները: Դրանց ձևավորումը համարվում է ուսուցման կարևորագույն խնդիրը, որից կախված է հետագա ուսուցման հաջողությունը²:

Աշակերտական կոլեկտիվ ստեղծելու, երեխաների միջև միջանձնային հարաբերությունների ձևավորման և զարգացման համար կարևորագույն նշանակություն ունի ուսուցչի մանկավարժական հաղորդակցման կարողությունը: Այն բնածին և ձեռքբերովի մանկավարժական հատկանիշների ամբողջություն է, որը ուսուցչի մանկավարժական վարպետության կանոր բաղադրամասն է կազմում:

Ամենից առաջ ուսուցիչը դաստիարակում է ոչ միայն այս կամ այն մեթոդով ու եղանակով, այլ սեփական անձնավորության օրինակով: Առանց մանկավարժի կենդանի ոգեշնչման՝ ուսուցման մեթոդը դառնում է անարդյունավետ: Կրտսեր դպրացականը սկսում է ընդօրինակել իր ուսուցչին, ով իրեն դաստիարակում է, առաջադրում ուսումնական պահանջներ, ուզում է նրա մեջ տեսնել իր իդեալը: Առանց ուսուցչի անձնավորության ունեցած դերի, աշակերտական կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկան դատապարտված է ձախողման: Կոլեկտիվը շատ զգայուն գործիք է, որը ստեղծում է դաստիարակության երաժշտությունը, և անհրաժեշտ է յուրաքանչյուր սանի

¹ Դ. Էլկոնին, Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975, էջ 28-29:

² Դ. Էլկոնին, Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975, էջ 74-75:

հոգու վրա ազդելու համար, մանավանդ երբ այդ գործիքը «լարված» է: Այդ ամենի հիմքում ընկած է ուսուցչի զգայուն վերաբերմունքը, հաղորդակցվելու մշակույթը իր սաների նկատմամբ:

Ահա թե ինչու դժվար է պատկերացնել աշակերտների դաստիարակությունն առանց համախմբված, մանկավարժորեն կառավարելի սկզբնական կոլեկտիվի:

Դասվարը կազմակերպում է աշակերտների հաղորդակցումը տարբեր ձևերով, օժանդակում նրանց փոխադարձ շահագրգռվածությունն ու հոգևոր հարստացմանը: Դա ձեռք է բերվում աշակերտների համագործակցության խրախուսման, ընկերական փոխօգնության կազմակերպման, կոլեկտիվ գործունեության զանազան ձևերի միջոցով:

Դասվարի հաղորդակցական հմտությունների պակասը կարող է վնասել ուսուցիչ-աշակերտ անկաշկանդ հարաբերություններին:

Նման դեպքերում ուսուցիչները չեն կարողանում համբերատար լսել աշակերտի կցկտուր, ոչ սահուն, դեռևս ամբողջությամբ չձևավորված խոսքը, բավարար ժամանակ չեն հատկացնում աշակերտի հետ շփվելու համար:

Հայտնի է, որ ուսուցչի խոսքը աշակերտների համար նմուշօրինակ է, որոնք երբեմն ինքնաբերաբար փորձում են ընդօրինակել նրան՝ աստիճանաբար ձևավորելով իրենց սեփական ոճը: Այս ամենը ընդհանրացվում է աշակերտների ամենօրյա հաղորդակցման ընթացքում: Երեխաների շփումը դասերի և դասամիջոցների ընթացքում, դառնում է նրանց հաղորդակցության ձևավորման խթան:

Մասնավորապես, հաղորդակցական հմտությունների ձևավորմանն են նպաստում հեքիաթները, զրույցներն ու թեմատիկ նկարագրությունները: Ուսումնական աշխատանքների հիմնական նպատակը երեխաների ընթերցանության տեխնիկայի զարգացումն է: Ընթերցանությունը անմիջականորեն ազդում է երեխաների խոսքի ձևավորման վրա, ընդլայնում նրանց լեզվամտածողության հնարավորությունները:

Բազմաթիվ են այն դեպքերը, երբ առաջին դասարանի երեխան դժվարանում է կապակցված խոսքով ներկայացնել իր ասելիքը՝ ամաչում է և կաշկանդվում:

Ընթերցանության միջոցով երեխաների իմացածի և նոր ձեռք բերվելիք գիտելիքների միջև որոշակի կապ է ստեղծվում և ճանաչողական գործընթացն ավելի ամբողջական ու կատարյալ է դառնում: Հենց այս գործընթացի ժամանակ են նրանք ձեռք բերում խոսք կառուցելու հմտություններ: Ընդօրինակելով մեծերի խոսքը՝ աշակերտները արտահայտվելիս գործածում են խոսքի տարբեր տեսակներ, սովորում են ինքնուրույն արտահայտել

սեփական մտքերը: Այս ամենը ուսուցանվում և ամրապնդվում է խաղերի հենքի վրա. երեխաները խաղում են սովորելով, սովորում են խաղալով:

Դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներն ավելի խորացված կատարվում է հաջորդ դասարաններում: Եթե առաջին դասարանում հաղորդակցումը միայն բանավոր ուղղվածություն ունի, ապա երկրորդ և հաջորդ դասարաններում այն իրականացվում է նաև գրավոր ձևով:

Գրավոր խոսքի զարգացումը բավականաչափ դժվար, երկարատև և կամային որակներ պահանջող գործընթաց է և առնչվում է յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունների հետ:

Այսպիսով, առաջին դասարանում ձևավորվում է երեխաների կապակցված խոսքը, որը համարվում է այդ ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետը: Այն լեցուն է խոսքի բոլոր տեսակներով, որին նպաստում է ուսումնառությունը:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական հմտությունների զարգացման ուղղությամբ տարվող հետազոտությունները ցույց են տալիս /Հայրավանքի միջնակարգ դպրոց/, որ երեխաների հաղորդակցական հմտությունները նկատելի տեղաշարժ են կրում ուսուցչի հետևողական աշխատանքների շնորհիվ: Երեխաների հաղորդակցական հմտությունների ձևավորման և զարգացման առավել արդյունավետ միջոցներ են համարվում ժամանակակից նորարարական մանկավարժական տեխնոլոգիաները:

Վերոնշյալից հետևում է, որ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է մշակել հաղորդակցական կարողությունների ձևավորման ու զարգացման տարբեր ծրագրեր: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացման համար առանձնացվել է երկու փուլ.

1. Արձանագրող փուլ՝ որոշել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հաղորդակցական հմտությունների առկա մակարդակը:

2. Ստուգողական փուլ՝ գնահատել երեխաների հաղորդակցական կարողությունների զարգացման մակարդակը:

Այդ նպատակով օգտագործվել է Ջ. Ա. Յուկերմանի մեթոդիկան՝ ըստ «Ձեռնոցներ», «Ո՞վ է ճիշտ» և «Թելադրության հետքերով» չափանիշների¹:

Այս չափանիշների հիման վրա գնահատվել է երեխաների հաղորդակցական հմտությունների զարգացման առկա մակարդակը՝ բարձր, միջին և ցածր ցուցանիշներով:

¹ <https://nsportal.ru/nachalnaya-shkola/obshchepedagogicheskie-ekhnologii/2017/12/10/metodiki-diaagnostiki-uud-v-nachalnoy>

Հաղորդակցական հմտությունների զարգացման բարձր մակարդակ ունեցող երեխաները հիմնականում շփվող են, ոչ կոնֆլիկտային և ոչ ամաչկոտ: Նրանք գիտեն շրջապատում ընդունված շփման կանոնները և գործնականում կիրառում են դրանք:

Հաղորդակցական հմտությունների միջին մակարդակ ունեցող երեխաները հիմնականում բարյացակամ են, շփվող: Սակայն մանկավարժին կամ ընկերոջն օգնում են միայն առանձին դեպքերում: Ոչ միշտ են կարողանում շարունակել ընդհանուր խոսակցությունը, պատասխանատվություն չեն կրում ուսումնական առաջադրանքներ կատարելիս, երբեմն խուսափող են տարբեր իրավիճակներում:


Հմտությունների ցածր մակարդակ ունեցող երեխաները երբեմն խախտում են ընդունելի վարքագծի կանոնները, առավել արտահայտված են կոնֆլիկտային իրավիճակներում, դժվարություններ ունեն ընկերների հետ շփվելիս, չեն կարողանում շարունակել ընդհանուր խոսակցությունը, անտարբեր են շրջապատի նկատմամբ և այլն: Երեխաների ոչ ընդունելի հաղորդակցական կարողությունները երբեմն դառնում են նրանց ցածր առաջադիմության պատճառ: Անվստահությունը իր ուժերի նկատմամբ՝ դժվարություններ է առաջացնում ուսումնական առաջադրանքների կատարման հարցերում և այլն:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների հետագա զարգացման համար տարվող աշխատանքներում օգտագործվել է քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան:

Արդյունքների գնահատման համար կիրառվել են նույն ախտորոշիչ քայլերը և տվյալների մշակման նույն վիճակագրական մեթոդները, որոնք օգտագործվել են հետազոտության արձանագրող փուլի ժամանակ:

Նկատվեց դրական արդյունքներ, որը վկայում է կատարված աշխատանքների արդյունավետության մասին:

Հետազոտությանը մասնակցեցին 32 աշակերտ (Հայրավանքի միջնակարգ դպրոց), որոնց հաղորդակցական կարողությունների զարգացման փոփոխությունը նկատելի է գծապատկերից.



- բարձր
- միջին
- ցածր

Գծապատկեր 1. Յուկերմանի մեթոդով արդյունքների վերլուծությունը արձանագրող և ստուգողական փուլերում:

Գծապատկերից երևում է, որ կրտսեր դպրոցականների տարիքում միջանձնային հաղորդակցական կարողությունների նախնական ցուցանիշները հետևողական աշխատանքների միջոցով կարելի է զգալիորեն բարելավել:

Հաղորդակցական հմտությունների զարգացման բարձր մակարդակ ունեցող երեխաների թիվն աճել է 6-ով, զարգացման միջին մակարդակ ունեցող երեխաների թիվը՝ 12-ով, իսկ ցածր մակարդակ ունեցող երեխաների

թիվը փոքրացել է, նրանցից շատերը տեղափոխվել են զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող խմբեր:

Այսպիսով, համաձայն ախտորոշման արդյունքների, հաստատվեց, որ աշակերտների միայն մեկ երրորդի մոտ են հաղորդակցական կարողությունները ձևավորված լինում բարձր մակարդակով, իսկ մյուսներն օժտված են հաղորդակցական կարողությունների որոշ մակարդակով, որը զարգացման անհրաժեշտություն ունի: Նման երեխաների մեծ մասը լավ չեն կարողանում լսել այլ մարդկանց կարծիքները, չեն կարողանում պլանավորել իրենց անելիքները և ծավալել այլ աշակերտների հետ համատեղ աշխատանք՝ թերանալով ուսումնառության մեջ:

Ախտորոշիչ հետազոտությունն անցկացվել է երկրորդ և երրորդ դասարանների աշակերտների շրջանում անկախ սեռային առանձնահատկություններից: Տեսական ու գործնական հետազոտության արդյունքներից երևում է, որ կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների զարգացման խնդիրը հրատապ է ու արդիական, որը լրացուցիչ խթան է նրանց ուսումնառության հարցերում:

Իհարկե, դպրոցականների կրթության և դաստիարակության գործընթացը հենքային նշանակություն ունի նրանց հաղորդակցական հմտությունների ձևավորման ու զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. Դ. Էլկոնին «Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն», Երևան 1975
2. Ա. Ա. Բայլան «Մանկավարժական հոգեբանության հարցեր»- Երևան: Լույս, 1983
3. Обухова Л. Ф., Возрастная психология, Москва, “Издательство Юрайт”, 2011.
4. Кулагина И. Ю., “Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет” / Ун-т Рос. акад. образования, 5-е изд , М., Изд-во УРАО, 1999.
5. https://ru.wikipedia.org/wiki/Брудный,_Арон_Абрамович#Аксиальная_и_ретиальная_коммуникация
6. https://ru.wikipedia.org/wiki/Ананьев,_Борис_Герасимович#Основные_научные_труды
7. <https://nsportal.ru/nachalnaya-shkola/obshchepedagogicheskie-ekhnologii/2017/12/10/metodiki-diagnostiki-uud-v-nachalnoy>:

PECULIARITIES OF FORMATION OF INTERPERSONAL COMMUNICATION CULTURE AMONG JUNIOR SCHOOLCHILDREN

OHANYAN HAYK

PhD in Pedagogy, Associate Professor,

Lecturer, Gavar State University

TADIVOSYAN KARINE

Graduate of the Master's program

Department of Pedagogy and Methodology /Elementary Education/, GSU

The article is devoted to the issue of interpersonal communication among schoolchildren, which is an additional stimulus to enhance the education quality.

Keywords: *junior schoolchildren, child, teacher, educator, communication skills, pedagogical technology, development of an individual, learning, etc.*

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ КУЛЬТУРЫ МЕЖЛИЧНОСТНОЙ КОММУНИКАЦИИ ЮНЫХ ШКОЛЬНИКОВ

ОГАНЯН АЙК

кандидат педагогических наук, доцент,

преподаватель ГГУ

ТАДЕВОСЯН КАРИНЕ

выпускница магистратуры отделения

педагогика и методика /начальное образование/ ГГУ

Статья посвящена проблеме межличностного общения младших школьников, что является дополнительным стимулом для дальнейшего повышения качества образования.

Ключевые слова: *младшие школьники, ребенок, учитель, педагог, коммуникативные навыки, педагогические технологии, развитие личности, обучение и др.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 06.10.2019թ.: